և տարակուսի մէջ է, թէ ներկայ հրամանը իշխանաբա՞ր է, թէ սիրուց ուղարկուած։ Նուիրակներին սիրով և պատուով ընդունելու համար յորդորի կամ խրատի պէտք չկայ, որովհետև իրենք միշտ հնազանդ են եղել Լուսաւորչի աթոռին և կարողութեան չափ «զսէրն և զհարկից նըվիրակացն եկեղոց և զհասկն կթղկսի. անթերի և յօժարութիւն. ենք հասուցել.»։

Իսկ կրօնի վերաբերեալ խնդիրներում նոյնն ենք, ինչ որ բոլոր Հայերն են Լուսաւորչից մինչև ներկայ կաթուղիկոսը։ Ամենախիստ կերպով մեղադրում է Աւրպելին Զաքարիային, որ նա «ի հակառակաց կողմն է ան-



Պատկեր 226.

ցել և երդմամբ չափ քակես զեկեղեցի Աստուծոյ, և զհնազանդեալքս ի հոգևոր գլխոյն օձտես, երբեմն իշխանաբար սաստելով, երբեմն գիրս և խօսս չարաբաստութեամբ. զմէնջ առ հոգևոր տէրն առաքելով եւ ի նմանէ մեզ սաստ եւ սպառնալիս տաս բերել»։ Ապա հեղնութեամբ աւելացնում է, որ դու քո նպատակիդ հասար բաժանելով մեզ, Հայոց աշխարհը իւր գլխից. այլ ևս ի՞նչ ես կամենում մեզնից։ Արդարանալու հիմք չունիս, որպէս թէ կաթուղիկոսի հրամանն ես կատարում. նա քեզնից «ջուր միայն խնդրեց ի խորհուրդն և դեկտեմբերի գիր. ծնունդ առնել», իսկ դու պահքի լուծումն, առաքելական կանոնների խախտումն անսուրբ կենդանիների նկատմամբ, «զհարկ երդուեցնելդ և ի հաւատոյն յ՞ըմէ քէ. ուսար. կամ և զեկեղեցիս Հայաստանեց. ուրանալ և յոլով նախատանօք նախատել կամ զտարոյն բոլոր պահքն ի Ժ. օր բերել, որպս. քո գրել. կանոնս էր, կամ զամուսնութի. աշխարհի քահնի. բառնալ» և անարժաններին քահանայութեան կոչել։

Թուղթը վերջացնում է դարձեալ հեգնութեամբ. եթէ դու գիտուն ես դարձել, «կամ քոյքդ որպս. պարծիս հանապազ և խրոխտացել. ես առջի. իշխանաց» պարտաւոր էիր գալ և մեզ էլ հասկացընել, իսկ եթէ մի երկու բան ես իմացել, այն էլ լսելով եւ ոչ ընթերցանութեամբ, քննիր «թէ ի ճշմարտութե. և՞ս, թէ ոչ»։ Այլ ես ինչ երկար գրեմ, քո կամքի համաձայն եղաւ. մենք ի՞նչպէս կարող ենք բռնել քեզ, «երբ դուք ի մէնջ փախչելն կու սիրէք»։ Աւրպելին «քոյքդ» բառով ակնարկում է կաթոլիկ միսիոնարներին, որոնք այդ ժամանակներն արդէն սկսել էին հաստատուել Սարպատականի սահմաններում, իսկ իշխանները Օրբէլեանները և Պռոշեաններն էին, որոնք, երևի, հանդիպել էին «ի դրունս աշխարհակալաց գալիս» (Յաւել. Դ. 10)(*)։

Զաքարիան առանց պատասխանի չի թողնում այս գրութիւնը, բայց առանց հեգնութիւններին հեգնութեամբ առարկելու. Աւրպելու խօսքերին, «թէ երբ ճշմարտութեն. հետևեցար զմեզ ընդէ՞ր չարարիր խորհրդակից», պատասխանում է, թէ մենք խորհրդի գլուխ քեզ էինք համարում, ինչպէս Դաւրիժում էլ եկեղեցու սենեակում խորհուրդ արինք. բայց երբ տեսանք, որ դուք կամք չունիք կաթուղիկոսին հնազանդելու, վստահանալով ձեր գիտութեան եւ փարթամութեան վերայ (իշխանական դիրքն ակնարկելով), մենք չհամարձակեցանք ապստամբել կաթուղիկոսից. բաժանման պատճառը մենք չենք, այլ ատելութիւնը. սիրոյ օրէնքով նա կամենում է, որ ամէնքը մի լինին, մի հօտ մի հովիւ (**)։

Այս շարժման մասնակից էին ոչ միայն եկեղեցականները, այլ և ժամանակակից իշխանները թեր և դէմ ուղղութեամբ. Օրբէլեան և Պռոշեան իշխան-

(*) Միութեան վիճաբանութիւնն սկզբում յունական բնոյթ ունի, բայց հետզհետէ զօրանում է կաթոլիկ ազդեցութիւնը լատինական քարոզիչների ազդեցութեամբ։

(**) Զաքարիան բացի այս թղթերից՝ ՉՀԹ (=1330) թուին նորոգել է ոմն Յովհաննէս սպասաւոր բանի «ի սուրբ ուխտն Մաղարթայ» աշխատութիւնը, ինքն էլ ուրիշ աղբիւրներից նորոգել «Ցիչկրութի. եպիսկոպոսաց առքլկն. վիճակիս Արտազու» վերնագրով (Արարատ, 1868. 102)։

Նորա շինարարական գործունէութեան մասին տեղեկանում ենք Թադէոս առաքելի տաճարի արձանագրութիւնից, որից երևում է, թէ «Զաքարիա եպիսկոպոս, որդի պարոն Մանվէլայ «կրկին նորոգել է շարժից կործանուած տաճարը ՉՀԸ (=1329) թուին. խնդրում է յիշել նաև իւր յա-